

Թիւն դառաւ աստուածաբան ուսուցչապետների կողմից, որոնք մինչև օրս եւրոպական լեզուով գրուած վստահելի աղբիւր չունէին հայ եկեղեցու, նորա դաւանաբանական հայեացքի և դարգացման վերաբերմամբ, և թէ հաշուի չառնենք մի քանի մասնական աշխատութիւններ, և մենք կարող ենք շնորհաւորել հեղինակին իւր յաջող աշխատութեան համար, որովհետև նա այս աշխատութեամբ ոչ միայն իրաւունք ստացաւ դոքտորական քննութիւն բռնելու, այլ որ գլխաւորն է, Գիտէնի համալսարանի աստուածաբանական ֆակուլտետը նրան արժանացրեց աստուածաբանութեան Լիցենցիատի պատուոյ տիտղոսին:

Մ. ԽՈՍՏԻԿԵԱՆ.

8-ն դեկտ. Եջմիածին.



## ԽԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ

Տարուայ վերջին ինչպէս ամէն տեղ, այնպէս էլ մեզ մօտ—պարբերական հրատարակութիւնների թիւը շատանում է: Խմբագրութիւնս ստացաւ նոր լոյս տեսած երեք հայ թերթ՝ «Անկախ Մամուլ», որը հրատարակում է Թիֆլիսում, «Մեր Զայնը»—Ն. Նախիջևանում, «Ժայռ»—Աղէքսանդրապօլում: Դժուար է ասել ինչ ապագայ է սպասում մեր այդ նորածին օրգաններին՝ մենք մեր կողմից յաջողութիւն ենք ցանկանում, հաւատացած լինելով, որ նրանցից ամէն մէկը երևան է եկել ժողովրդին կրթելու և լուսաւորելու նպատակով: «Անկախ Մամուլը» իւր առաջնորդողում խոստանում է լիովին անկախ լինելու և անվախ մտածելու. ուրիշ խօսքով ասած լինել ոչ Դաշնակցական, ոչ Մշակական, ոչ Նորդարական, գուցէ և ոչ «էսդէք» և ոչ «էսէն»: Աստուած տայ. բայց կարելի է արդեօք Մանօթ գրական անուններից մենք այստեղ

հանդիպեցինք Լէօյին, Ստորա-Լէտին, Պ. Զաքարեանցին, Տ. Զաւէնին, Ա. Ա-ին։

«Մեր Զայնը»—Նպատակ ունի յատկապէս ծառայելու ռուսահայ դաղթականութեան, նրա ուղեցոյցը լինել ազգային քաղաքական և տեղական պէսպէս գործերում։ Նրա խմբագիրը մեր գրականութեան մէջ ծանօթ անձնաւորութիւն է՝ Յովհ. Մարխասեանը, որը մի քանի տարի սրանից առաջ Կովկասից աքսորուած էր և հաստատուած նոր Նախիջևանում։ Այս թերթի շուրջը—ինչպէս այդ երևում է յայտարարութիւնից—խմբուել են թէ՛ նոր Նախիջևանի և թէ՛ Կովկասի այն գրական ուժերը, որոնք հասարակօրէն «պահպանողական» են կոչուում, բայց որոնք աւելի «նացիօնալիստ» (ազգայնականներ) պէտք է անուանուէին։ Դրանք են՝ Մանուկ Աբեղեան, Մկրտիչ Բարխուդարեան, Մինաս Բերբերեան, Յար. Ճուղուրեան, Մարս, Միհրան, Նար-Դոս, Եր. Շահազիզ, Ոստանիկ, Գէորգ Զուբար և այլն։ «Մեր Զայնի» առաջին համարները բովանդակալից են և հետաքրքրական. աչքի է ընկնում անկողմնապահութիւնը և լրջութիւնը, «նոր—կեանք»ի երեխայական թոթովանքներից յետոյ Նախիջևանցիք ըստ երևութիւն ունենալու են մի կարգին թերթ։

Աղէքսանդրապօլում հրատարակուող «Ժայռ»ի միայն առաջին համարն ենք ստացել, որը նոյնպէս բաւականին խնամքով է կազմուած։ Ծանօթ անունների այստեղ մենք չպատահեցանք։ Յառաջաբանից մենք եզրակացնում ենք, որ սա լինելու է կուսակցական թերթ, աւելի լաւ է ասել դասակարգային. նա յենուելու է «աշխատաւորութեան» ուժի վերայ և պաշտպանելու է աշխատաւորութեան շահերը։ Ապագան անշուշտ ցոյց կտայ թէ ինչ է հասկանում խմբագրութիւնը աշխատաւոր ասելով, ինչպէս է ըմբռնում նրա շահերը, որչափով ձեռնհաս է ցոյց տալ այն ուղին, որ տանում է նրան դէպի եղբայրութիւն և հաւասարութիւն։